

Զարգացման ծրագրի բովանդակությունը

Ներածություն-----	4
1. Դպրոցի առաքելությունը -----	5
1.1 Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու ծրագրի առաքելությունը	
1.2 Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար	
1.3 Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար	
1.4 Որքանո՞վ է առաքելությունն իրատեսական	
1.5 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները	
1.6 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները	
2. Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ-----	9
3. Դպրոցի գործունեության և նպատակադրման ոլորտները -----	12
3.1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	
3.2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	
3.3. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը	
3.4. Կառավարման և խորհրդակցական մարմինները	
3.5. Աշակերտական համակազմը	
3.6. Մանկավարժական համակազմը	
3.7. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	
3.8. Ուսուժսական միջավայրը	
3.9. Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	
3.10. Տեխնոլոգիաները և նորարարությունները	
3.11. Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները, վտանգները	
4. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակներն ու խնդիրները-----	32

5.Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները-----33

6.Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները և միջոցառումների ժամանակացույցը

7.Կատարողները

8. Արդյունքների գնահատման չափանիշները

9. Ծրագրի գնահատման չափանիշներն ու վերահսկողությունը

10.Ակնկալվող արդյունքները-----51

11. Եզրափակում -----52

Ներածություն

Կրթության արմատները դառն են, բայց պտուղը քաղցր է: Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար: Նելսոն Մանելա

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: /ՀՀ Սահմանադրություն, հոդված 39

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է «Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածությունն ունեցող և համակողմանի զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է»:

«Լոռու մարզի Մեծ Պարնու միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028 թվականների ծրագիրը մշակվել է հաշվի առնելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները, որի հիմքում ընկած են կրթության ոլորտը կարգավորող վերը թվարկված իրավական ակտերը և «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին օրենքը:

ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2021-2030 թվականների պետական ծրագրին» համապատասխան՝ հաշվի առնելով կրթական հաստատության ներուժը և առանձնահատկությունները, մանկավարժական համակազմի ձեռքբերումները և դպրոցում առկա խնդիրները:

2023-2028 թվականների զարգացման ծրագիրը, որը բնութագրում է դպրոցի զարգացման իրական վիճակը՝ ձեռքբերումներն ու մարտահրավերները, զարգացման հիմնական միտումները, կրթության հիմնական նպատակները, սովորողների խնդիրները և նպատակները, հիմնական պլանավորված արդյունքները, ծրագրի կատարման համար գնահատման չափանիշները կարգավորող և կառավարման փաստաթուղթ է:

Դպրոցի զարգացման ծրագիրը երկարաժամկետ կարգավորող փաստաթուղթ է, որը բնութագրում է կրթության, զարգացման խնդիրների ու ուղղությունների հիմնական միտումներն ու նպատակները, մանկավարժական գործընթացի կադրային և մեթոդական աջակցության կազմակերպման առանձնահատկությունները և կրթական համակարգի նորարարական վերափոխումները, հիմնական պլանավորված վերջնական արդյունքներն ու չափանիշները:

Դպրոցի առաքելությունը

1.1 Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու ծրագրի առաքելությունը

Բավարարել սովորողների կրթական կարիքների պայմաններում իրենց անհատական հնարավորություններին համապատասխան ձևավորմանը նպաստող կրթական միջավայր, քաղաքացիական պատասխանատվություն, նախաձեռնողականություն, անկախություն, հասարակության մեջ հաջողությամբ շփվելու ունակություն համաշխարհային մշակութային արժեքներին ծանոթանալու հիման վրա:

Գիտելիքներ փոխանցելով պարզապես հնարավոր չէ ձևավորել սոցիալապես պատասխանատու, ակտիվ անհատականություն, քաղաքացի և հայրենասեր սովորող: Ժամանակակից կրթությունը կարող է իրականացվել ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցիչների համագործակցության շնորհիվ:

Կրթության ժամանակակից սկզբունքներ ասելով նկատի ունենք այն 4 հիմնարար սկզբունքները, որոնք ձևակերպել է ՅՈՒՆԵՍԿՕ-ն ներկայացված 21-րդ դարի կրթության միջազգային հանձնաժողովի զեկույցում.

- սովորել ապրել (կյանքի գործունեության սկզբունքը)
- սովորեք միասին ապրել
- սովորել ձեռք բերել գիտելիքներ
- սովորել աշխատել (բարելավել մասնագիտական հմտությունները, տարբեր իրավիճակներում կողմնորոշվել և գործել)

Արժեքներ, որոնց վրա այն հիմնված է և կշարունակի լինել հիմնել դպրոցի գործունեությունը.

- Հումանիտար կրթություն, որը ներառում է ազատ զարգացումն ինքնազարգացում.
- բռնության, ճնշելու և գերիշխանության գաղափարի մերժում, հավասար հարաբերությունների հաստատում
- կրթական կազմակերպության ավանդույթների ձևավորում, զարգացում և պահպանում
- սովորողների ինքնակազմակերպման և մանկավարժական համակազմի բարձր մակարդակի ձգտում
- շրջանավարտներին ապահովել որակյալ կրթությամբ պետական կրթական չափորոշչի մակարդակին համապատասխան

1.2 Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

Դպրոցի սոցիալ-մանկավարժական առաքելության իրականացումը պետք է կատարվի ուսուցչական համակազմի գործունեության հետևյալ ոլորտների և խնդիրների իրականացման միջոցով.

- կրթության բովանդակության կողմնորոշման արդյունքում սովորողների մոտ կձևավորվի սոցիալ-տնտեսական հիմնական կարողունակություններ.
- խնդիրները լուծելու պատրաստակամություն
- տեխնոլոգիական կառուցումակություն
- պատրաստակամություն ինքնակրթության համար
- տեղեկատվական ռեսուրսների օգտագործման պատրաստակամություն
- պատրաստակամություն սոցիալական փոխազդեցության համար
- հաղորդակցական իրավասություն
- փուլային անցում դեպի նոր կրթական չափորոշիչներ՝ համապատասխան
- կրթության բոլոր մակարդակների շարունակականության ապահովում
- սովորողների մտավոր և ստեղծագործական ներուժի զարգացում.
- սովորողների առողջության պահպանում ու ամրապնդում, առողջ ապրելակերպի անհրաժեշտություն ձևավորում
- ներդպրոցական կառավարման համակարգի կատարելագործումը վրա հիմնված տեղեկատվական-հաղորդակցության տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործում
- անցումային շրջանում կրթության որակի ներդպրոցական գնահատման ձևավորում մի դպրոցական մակարդակից մյուսը
- մասնագիտական ուսուցման համակարգի մշակում, ապագա մասնագիտության գիտակցված ընտրության
- դպրոցի, ուսուցչի դրական կերպարի ձևավորում դպրոցականների, հասարակության շրջանում
- դպրոցի ավանդույթներին հարգալից վերաբերմունք, պահպանելով երկար տարիների նրա յուրահատկությունը և գրավչությունը
- դպրոցի կրթական ներուժի զարգացում, համակարգված մոտեցում դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպում
- ժամանակակից միջոցների ինտեգրված օգտագործման արդյունավետության բարձրացում

Նախատեսել էական փոփոխություններ դպրոցի կրթական համակարգում, որը կհանգեցնի կրթության նոր որակի ձեռքբերմանը, որակյալ կրթության հասանելիության, ավելի արդյունավետ առկա ռեսուրսների օգտագործման: Այս առումով ծրագիրը երկարաժամկետ է.

- տաղանդավոր երեխաների հետ աշխատանքի կազմակերպում, ստեղծագործական զարգացում

- «Դպրոցի շնորհալի երեխաներ 2023-2028թթ.» ծրագրի մշակում և իրականացում»:
- տաղանդավորների անհատական կրթական հետազոծի ձևավորում և շնորհալի երեխաների ուսուցում
- ընտրվածների մոտ կրթական և հետազոտական գործունեության ծավալների ավելացում
- բացահայտել այն առարկայի ոլորտը, որը նպաստում է սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը
- բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի իրականացման համար դպրոցի միջև փոխգործակցության մոդելների ներդրում

1.3 Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար

Որակյալ կրթությունը որպես ազգային արժեք և սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևոր գրավական շարունակում է մնալ գերակայությունների շարքում:

Մարդկային ռեսուրսներ`

- առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակակյան բարելավում
- մանկավարժական համակազմի համալրում նոր փորձառու կադրերով

Նյութատեխնիկական բազա`

- Համակարգչային տեխնիկայի համալրում
- Ժամանակակից սարքերի և սարքավորումների ձեռքբերում
- Էլեկտրոնային կրթական ռեսուրսների շարունակական համալրում և դասապրոցեսում վերջիններիս կիրառման ընդլայնում

1.4 Որքանո՞վ է առաքելությունն իրատեսական

- փորձառու մանկավարժական համակազմը,
- մասնակցային և համագործակցային աշխատանքը,
- համընդհանուր ներառական կրթության իրականացումը,
- հոսքային ուսուցման արդյունավետ կազմակերպումը,
- կրթության որակի բարելավմանը միտված շարունակական, միջոցառումները` սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ,
- հոսքային ենթակառուցվածքների համալրում/ կենսաքիմիա, ծրագրավորում/
- կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը,
- դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում,
- արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն),
- դպրոցում ձևավորված ավանդույթները,
- խրախուսման միջոցները` անվանակարգերը, շնորհակալագրեր

- սովորողների մասնակցությունը միջազգային և հանրապետական մրցույթներին:

1.5 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները

- Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոններն են՝
Դրական՝
- առաքելության իրագործման գործընթացում կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր)՝ ակտիվ ներգրավումը
- մարդկային, նյութական, ժամանակային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը
- հոսքային ենթակառուցվածքների համալրումը
- արդյունավետ ղեկավարումը

Բացասական՝

- կրթական գործընթացի մասնակիցների իներտ, պասիվ վերաբերմունքը
- առաքելության նկատմամբ թերահավատությունը
- միանձնյա, ոչ թափանցիկ ղեկավարումը

Թվարկված ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝

- բոլոր հնարավոր ռիսկերի կանխատեսում և գնահատում,
- ռիսկերի կառավարման գործողությունների ճիշտ պլանավորում,
- գործողությունների համակարգված իրականացում:

1.6 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները

Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոններն են՝
Դրական՝

- պետության կրթական քաղաքականության՝ կրթության որակի բարձրացմանը միտված՝ նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը
- երկրի տնտեսական աճով պայմանավորված՝ կրթության գծով պետական ֆինանսավորման չափաքանակի ավելացումը
- համայնքի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների կարևորումը և ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը դպրոցի կրթական գործընթացի կազմակերպմանը

- լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավել

2. Դպրոցի մասին քննհանուր տեղեկություններ

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց»

Հաստատության անվանումը՝

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):



Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 29.10.2020 թ., գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կենտրոնի տարածքային բաժնի կողմից:

Պետռեգիստրի վկայականի գրանցման համարը՝ [90.210.00377](#)

Իրավաբանական անձի ծածկագիրը(ՁԿԴ) [10001868](#)

Դպրոցի գտնվելու հասցե

ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք՝ գյուղ Մեծ Պարնի , **1-ին փողոց, 76 շենք** / Սպիտակ 1818

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Կնիքը, ձևաթղթերը և անհատական այլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող է զուգակցվել անգլերենը և ռուսերենը:

Հաստատության հեռախոսահամարը՝ **+374 255 6 20 01**

Հաստատության էլեկտրոնային հասցեն՝ metsparni@schools.am



Հաստատության ինտերնետային կայքի հասցեն՝

<https://metsparni.schoolsite.am/>

Դիտել քարտեզը՝ <https://maps.app.goo.gl/99AUZvm77n7L3qDY6>

Հաստատության ֆբ. կայքէջը

<https://www.facebook.com/profile.php?id=100094508724922>



«Մեծ Պարնու ալ.Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, իրականացնում է հանրակրթական նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ ծրագիր:

Դպրոցում աշխատում է 22 ուսուցիչ, որից 21-ը բարձրագույն մասնագիտական կրթությամբ:

Դպրոցի աշակերտների թիվը 220 է:


Մանկավարժական խորհուրդը կազմված է 22 անդամից, կառավարման խորհուրդը՝ 9, իսկ ծնողական խորհուրդը 13: Աշակերտական խորհուրդը կազմված է 12 անդամից:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

Դպրոցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

Դպրոցի առկա իրավիճակի վերլուծությունը շատ կարևոր է դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒԼՔԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «18» Հուլիսի 2014 թվականին գույքի նկատ հրավորների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- ԳՐԱՆՑԿԱՆ ԻՐԱՎՈՒԼՔԻ ՍՈՒԹՅԱՆ (ՆԵՐ)**
ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցի ԴՊՈՎ
- ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՉՏՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՎԱՆՈՒՄԸ**
Մարզ Լոռի, համայնք Մեծ Պարնի 1 փողոց 76, դպրոց
- ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՅԻՆՆԵՐԸ**
Ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր N61/0014, 14/07/2014թ. սկզբնական 6506
- ՀՈՂԱՍՏԱԻ ԲԵՌՈՒԹՎԱԳՐԵՐԸ**
Կադաստրային ծանկագիրը՝ 06-075-0044-0007
Սակերեսի չափը (հա)՝ 2.945

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

5. ԾԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵՌՈՒԹՎԱԳՐԵՐԸ

- Նպատակային նշանակությունը՝ Հասարակական
- Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/ի	Կադաստրային ծանկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	06-075-0044-0007-001-000	Դպրոց	2576.5 ք.մ.	ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագիրը գործում է անժամկետ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հայկունի Պապիկյան
զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

Վկայականը գույքի կարաստի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայական
գրանցման միասնական գրասենյակի



Դպրոցի գործունեության և նպատակադրման ոլորտները



3.1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Առկա դպրոցի շենքը կառուցվել է 1996 թվականին, բաղկացած է երկհարկանի 3 մասնաշենքից : Դպրոցը վերանորոգման կարիք ունի,դպրոցի տանիքը ամբողջությամբ հիմնանորոգման կամ փոխրինման կարիք ունի:Դասասենյակների սեղան աթոռները շատ հին են փոխարնվելու ենթակա:Դասասենյակների բոլոր դռները փոխարինման ենթակա:

Դպրոցի մասնաշենքերում, այս պահին գործում է 13 դասասենյակ, կա 3 վարչական սենյակ,

խորհրդակցությունների սենյակ, համակարգչային սենյակ քառասունչորս օրյա պատերազմում անմահացած՝ Հովհաննես և Մանվել Քյասինյանների և Վարդան Աշուղաթոյանի անուններով անվանակոչված ռազմագիտության դասասենյակ:

Կենտրոնական ջեռուցման համակարգը ապահովում է դասասենյակների ջերմությունը:

Գործում է 14 սանհանգույց:

Դպրոցի տանիքը ենթակա է ամբողջությամբ փոխարինման,3 մասնաշենքերն կարիք ունեն վերանորոգման, նախատեսվում է ունենալ մարզադահլիճ և հանդիսությունների սենյակ:

Ուսումնական հաստատության տարածքը անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժի համար: Բոլոր դասասենյակների պատուհանները մետաղապլաստե ձայնամեկուսիչ են: Դպրոցը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար (թեքահարթակի առկայություն):

Դպրոցի տարածքը մաքուր է: Աղբահանությունը կատարվում է: Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով:Ապահովված է հակահրդեհային անվտանգության լրակազմով:

Դպրոցն ապահովված չէ անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով:

ՀՀ կառավարության N1073-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Լոռու մարզպետարանի նախաձեռնությամբ տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով իրականացվել է Մեծ Պարնու միջնակարգ դպրոցի ջեռուցման համակարգի կառուցումը:

«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական ՀԿ-ն 2022

թ. Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրում իրականացրել է «Մեծ Պարնի բնակավայրի դպրոցի սանիտարական վիճակի բարելավում» ծրագիրը, որի շրջանակում դպրոցն ապահովվել է խմելու ջրով, վերանորոգվել է դպրոցի սանհանգույցը, տեղադրվել է կեղտաջրի մաքրման կայան:

Նպատակ ունենք.

1. Վերանորոգել 1-ին մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերը
2. Կահավորել դասասենյակները համապատասխան նոր գույքով՝ ապահովելով սովորողների ֆիզիկական առողջությունն ու հոգու ներդաշնակությունը,
3. Դասասենյակների հատակի հնամաշ լինուեումը փոխարինել նորով:
4. Բարեկարգել դպրոցի բակը՝ ապահովելով սովորողների հանգիստը, ձևավորելով սիրո և հոգատարության զգացում դեպի հայրենի բնությունը: Դպրոցամերձ տարածքում հիմնել բնակլիմայական պայմաններին հարմարվող ծառատեսակներով, հիմնել գեղեցիկ այգի:

3.2. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում:

Դպրոցի ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական բյուջեից: Բյուջեի ծախսերի հիմնական ուղղություններն են

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ (ներառյալ եկամտահարկը)
- Կոմունալ վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- Կապիտալ ծախսեր
- Այլ ծախսեր

3.3 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ , օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով,ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սամանված կարգով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 08.09.2020թ. «Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը» N 28-Ն հրամանով հաստատված հավելվածում ներառված փաստաթղթերն են՝

- 1) Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
- 2) Էլեկտրոնային հաստիքացուցակ
- 3) Տարիֆիկացիոն մատյան
- 4) դպրոցի մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ
- 5) Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
- 6) Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով

3.4 Կառավարման և խորհրդակցական մարմինները


«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 29-րդ կետի համաձայն՝ հաստատության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով: Հաստատությունում, ըստ ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 23-ի N444 որոշման, իրականացվում է կոլեգիալ կառավարում:

Կոլեգիալ կառավարումն իրականացնող մարմինը հաստատության խորհուրդն է: «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության 77-րդ կետով ամրագրված է. «Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման

ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝

մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ»:

Խորհրդակցական բոլոր մարմիններն ունեն իրենց կանոնադրությունը, որը կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Կանոնադրությամբ սահմանվում են տվյալ մարմնի գործունեության ոլորտները և կարգը:



Մեծ Պարնու ակ. Մ.Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում *կառավարման խորհուրդը* նպաստում է դպրոցի արդյունավետ գործունեությանը, ապահովում համագործակցություն համայնքի հետ, քննարկում ֆինանսական և տարիֆիկացիոն հարցեր, ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:

Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է համակազմի օգոստոսյան առաջին

նիստին: Մանկխորհուրդը սովորաբար գումարվում է հիմնականում բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում ընթացիկ հարցեր: Նիստերը արձանագրվում են սահմանված կարգով:

Դպրոցի աշակերտական խորհուրդը գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, նախաձեռնում և կազմակերպում թեմատիկ միջոցառումներ, նպաստում ներքին կարգապահական կանոնների պահպանմանը:

Աշակերտական խորհրդի հետագա ավելի ակտիվ գործունեության համար անչափ կարևորում ենք նրանց կողմից բարձրացվող հարցերի մանրամասն ուսումնասիրությունը և մասնագիտական վերլուծությունը՝ կազմակերպելով տարատեսակ քննարկումներ: Դպրոցի 2-րդ մասնաշենքի վերանորոգման ընթացքում նախատեսում ենք նաև ունենալ հարմարավետ աշակերտի անկյուն:

Դպրոցում աշակերտների կրթության և դաստիարակության գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու համար անչափ կարևոր է դպրոցի *ծնողական խորհրդի* ճիշտ և հետևողական աշխատանքը:

Ծնողը ուսուցչի առաջին և կարևորագույն գործընկերն է: Դպրոցի ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է ինչպես դպրոցի տնօրենության, այնպես էլ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ՝ մշտապես աջակցելով ուսումնադաստիարակչական և կազմակերպչական տարբեր հարցերում: Կարևորելով դպրոցի խորհրդակցական մարմինների միասնական և փոխկապակցված գործունեությունը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում՝ որպես դպրոցի տնօրեն՝ պետք է

կարողանալ ժամանակին և ճիշտ գնահատել նրանց աշխատանքը և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խորհրդակցական մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպել տարատեսակ քննարկումներ և սեմինարներ:

3.5. Աշակերտական համակազմը

2023-2024 ուստարվա դպրոցում սովորում է 220 աշակերտ: Հատուկ ուշադրություն է դարձվում շնորհալի և ստեղծագործող աշակերտներին, նրանց հաջողություններին և՛ դպրոցում, և՛ դպրոցից դուրս: Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցում և մրցանակային տեղեր են զբաղեցնում առարկայական օլիմպիադաներում և տարբեր մրցույթներում:

Առաջիկայում նախատեսում ենք դպրոցի կայքում ստեղծել հատուկ բաժին շնորհալի սովորողների և նրանց հաջողությունների մասին պատշաճ տեղեկատվության համար:

3.6. Մանկավարժական համակազմը

Դպրոցի բոլոր ուսուցիչները իրենց գործի իսկական նվիրյալներն են՝ համապատասխան մասնագիտական կրթությամբ:

Դպրոցում գործում են հայոց լեզվի և գրականության, պատմության և բնագիտամաթեմատիկական մեթոդափափորումները:

Մեթոդափափորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի, մեթոդական ուսուցման կազմակերպումն է, դասավանդման ձևի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի վերլուծությունը, նոր ուսուցիչների հետ ամենօրյա աշխատանք տանելը և այլն:

Մեթոդափափորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների

պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի կատարումը:

Պարբերաբար գումարվում են նիստեր, որոնք արձանագրվում են համապատասխան ձևով: Մեթոդմիավորումների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հետևողական մոտեցում: Այդ նպատակով անհրաժեշտ է՝

- Առարկայական մեթոդական միավորումների նախագահների համար կազմակերպել սեմինարներ՝ «Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների պլանավորումը և կազմակերպումը» թեմայով:
- Զարգացնել առարկայական մեթոդական աշխատանքի կազմակերպման զինանոցը՝ գործող փորձի ուսումնասիրության միջոցով:

3.7. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը. համատեղ շաբաթօրյակ, ծառատունկ: Համայնքի ներկայացուցիչներ հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միոցառումներին, մասնավորապես ազգային տոներ, տոնակատարություններ, հիշատակի օրեր կազմակերպելիս:

3.8. Ուսումնական միջավայրը

Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Այն դպրոցում սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Կրթական արդի միջավայրը միավորում է կրթության համակարգի բոլոր տարրերը և ցույց տալիս ուսումնական գործընթացի տարբեր մեխանիզմներ և գործիքներ:

Կարևորագույն հարցերից մեկը դպրոցում պետք է լինի երեխաների առողջության պահպանումը: Այս նպատակով կարևորում ենք սովորողների շրջանում պարբերաբար կազմակերպել տարատեսակ միջոցառումներ, հանդիպումներ, դասախոսություններ անառողջսովորությունների վնասակարության թեմայով:

Դպրոցում առկա է բուժսենյակ՝ անհրաժեշտ դեղորայքով:

Աշակերտների բացակայությունները պետք է խստորեն վերահսկվեն, ճշտվեն պատճառները, բացառվեն անհարկի բացակայությունները: Անհրաժեշտության դեպքում Առողջապահության նախարարության համապատասխան հրամանի համաձայն՝ դասարանները օպերատիվ կերպով կարող են անցնել առցանց ուսուցման՝ ըստ կարգի:

Դպրոցում խստորեն պահպանվում են սանիտարահիգիենիկ պահանջները, կատարվում է ամենօրյա ախտահանում:

Դպրոցում պետք է տարվի ամենօրյա հետևողական աշխատանք՝ բոլորի համար հաճելի մթնոլորտ ստեղծելու բարդ գործընթացի անցումը համար:

Աշակերտները պետք է սովորեն միմյանց հետ ճիշտ շփվելու մշակույթ, իսկ դա պետք է անել սեփական օրինակով:

Դպրոցի տնօրենի կարևորագույն խնդիրներից մեկը բարոյահոգեբանական ճիշտ մթնոլորտի ձևավորումն ու պահպանումն է թե՛ մանկավարժների, թե՛ ուսումնական հաստատության մյուս աշխատակիցների շրջանակում:

Երեխաները և նրանց ծնողները պետք է համոզված լինեն, որ դպրոցում երեխաները ապահով են, պաշտպանված, մշտապես ուշադրության կենտրոնում:

Ճիշտ կրթական միջավայրի ապահովման գլխավոր գրավականներից մեկը բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտի ապահովումն է:

3.9. Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Դպրոցի գործունեության գերնպատակը սովորողների կրթության որակի բարձրացումն է, դրա համապատասխանությունը պետական և առարկայական չափորոշիչներին:

Պետք է ամենօրյա համալիր աշխատանք իրականացնել ուսման որակը և սովորողների առաջադիմությունը բարձրացնելու նպատակով: Դպրոցի մեթոդափափորումները պետք է վերահսկեն ուսումնական պլանների կատարումը, դասի պլանների՝ կրթության պետական նոր չափորոշիչներին համապատասխանելը, դասավանդման որակը, տնային աշխատանքների ծավալը և արդյունավետությունը, կատարեն վերլուծություններ: Նախատեսում ենք անցկացնել աշակերտներին դրվող օբյեկտիվ գնահատականների ստուգմանն ուղղված միջոցառումներ՝ համադպրոցական գրավոր աշխատանքներ, պարբերաբար անցկացվող գիտելիքի ստուգումներ, դասալսումներ՝ արդյունքները համեմատելով ընթացիկ գնահատականների հետ, քննարկելով մեթոդափափորումների նիստերում:

Պետք է մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսուցիչների՝ գիտելիքների փոխանցման և գնահատման ձևերին ու մեթոդներին, յուրաքանչյուր երեխային ցուցաբերվող առանձնահատուկ մոտեցումներին, էլեկտրոնային մատյանների ճիշտ և ժամանակին լրացմանը:

Կրթության որակի վերահսկման և սովորողների ուսումնառության որակի բարձրացման գործում կարևորում ենք համագործակցությունը ծնողական համայնքի հետ: Համոզված ենք, որ դպրոց-ուսուցիչ-աշակերտ-ծնող միասնությունը կարող է ապահովել անհրաժեշտ կրթական որակ և արդյունք:

3.10. Տեխնոլոգիաները և նորարարությունները

Ժամանակակից դպրոցն անհնար է պատկերացնել առանց ՏՀՏ կիրառության: Դրանք յուրաքանչյուր օր օգտագործում են թե՛ դպրոցի տնօրենությունը, թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները և նրանց ծնողները: Կիրառվում են էլեկտրոնային դասամատյաններ և օրագրեր, դպրոցում կիրառվող մատենագրությունը աստիճանաբար թղթայինից անցում է կատարում էլեկտրոնայինի:

Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը:

Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն

մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման

ձևերը: Դպրոցում այսպիսի նորարարական տեխնոլոգիաների կիրառումը պահանջում

է ժամանակ և միջոցներ: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառման կարողություններ:

Ուսուցիչը պետք է ժամանակ ունենա նոր գիտելիքներ ստանալու, դրանք գործածելու, սխալներն ուղղելու և մոտեցումները վերանայելու համար:

Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը:

Ցանկալի է, որ յուրաքանչյուր դպրոց, ըստ իր զարգացման ուղղվածության առաջնահերթությունների ներդնի գիտականորեն հիմնված որևէ նոր, զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարություն: Սա հնարավորություն կտա հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուսներից, օգտագործելով,

տարածելով հաջողված փորձի արդյունքները:

3.11 Դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները

Ուժեղ ԿՈՂՄԵՐ

Վարչական կազմ

- ղեկավարման բազմամյա փորձ ունեցող, աշխատանքում հետևողական, արհեստավարժ վարչական անձնակազմ, մշտապես ֆիլտրացվող թիմ:
- համագործակցային և թիմային աշխատանքի իրականացում
- կառավարման ժողովրդավարական ոճ
- կադրային ճիշտ քաղաքականություն
- բարձր կարգապահություն և պատասխանատվություն
- բոլոր օղակների աշխատանքի համակարգվածություն և վերահսկողություն
- մանկավարժների բնականոն աշխատանքի կազմակերպման հստակ մեխանիզմ
- Նպատակաուղղված և արդյունավետ ներդրոցական վերահսկողությունը՝ միտված կրթության որակի ապահովմանը
- Համագործակցային և առողջ բարոյահոգեբանական

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Վարչական կազմ

Հանրապետական և միջազգային գիտաժողովներին, սեմինարներին, վեբինարներին մասնակցության ցածր մակարդակ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ

- անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված բարձրորակ մանկավարժ-մասնագետներ, ստեղծագործ ուսուցիչներ:
- բարձր պատասխանատվություն
- աշխատանքից բացակայություն միայն խիստ անհրաժեշտության դեպքում
- մարդկային բարձր որակներ
- համակազմի միջին տարիքային ցուցանիշի նվազում
- աշակերտակենտրոն մոտեցում
- սովորողի հաջողության կարևորում և գնահատում
- սպասարկող պատասխանատու անձնակազմ
- Բազմակարծիք, ներառական ,մասնակցային արժեքային միջավայր,որն արտահայտվում է մանկավարժական խորհրդի նիստերում և ընդգրկվում ուսումնադաստիարակչական ,Ներքին կարգապահական,Ներքին գնահատման հաշվետվություններում

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

Մանկավարժական և ուսումնաօժանդակ կազմ

- ուսուցչի հասարակական ցածր վարկանիշ
- տարակարգեր ձեռք բերելու և «Լավագույն ուսուցիչ» մրցույթին ինչպես նաև կամավոր ատեստավորման մասնակցելուց խուսափել
- երիտասարդ, ընտանիքների արտագաղթը
- որոշ առարկաների ուսուցիչների կարիք, առանձին դեպքերում՝ իսպառ բացակայություն
